ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-3-3-Ա

ք. Երևան 28.04.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի ապրիլի 28-ի նիստում քննարկեց 2021 թվականի հունվարի 8-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ “Barilla G. e R. Fratelli-Società per Azioni” (Via Mantova, 166 Parma, PR)) ընկերության բողոքը «MASTERS OF PASTA» (IR1455136) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Հայտում նշված մնացած ապրանքների և ծառայությունների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքերի և ծառայության բնույթի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանի վրա առկա է «PASTA» (թարգմ.՝ մակարոնեղեն) գրառումը, որը նշում է կոնկրետ ապրանքի տեսակ և վերը նշված հիմքերով չի կարող գրանցվել հայտարկված բոլոր ապրանքների և ծառայությունների համար:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու և կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու վերաբերյալ, քանի որ հայտատուն մերժված ապրանքների ցանկը սահմանափակել է հետևյալով՝ դաս 30. մանանեխ. քացախ. սոուսներ. ամոքանք. համեմանք մակարոնեղենի համար. համեմունք մակարոնեղենի համար. պեստո (սոուս). տոմատի սոուս. սոյայի սոուս. զաֆրան (քրքում) (համեմանք) կոճապղպեղ (համեմանք մակարոնեղենի համար) (բոլոր վերը նշված ապրանքները, որպես համեմունքներ մակարոնեղենի համար), դաս 41. խոհարարության դասընթացների կազմակերպում. մրցույթների կազմակերպում խոհարարության ոլորտում. կոլոքվիումների կազմակերպում և անցկացում խոհարարության ոլորտում. սեմինարների կազմակերպում և անցկացում խոհարարության ոլորտում. գիտաժողովների (սիմպոզիումների) կազմակերպում և անցկացում խոհարարության

ոլորտում. վարպետաց դասերի կազմակերպում և անցկացում (ուսուցում) խոհարարության ոլորտում. գրքերի հրատարակում խոհարարության ոլորտում. տեքստային նյութերի հրապարակում, բացառությամբ գովազդային նյութերի խոհարարության ոլորտում. գրքերի և պարբերականների առցանց հրապարակում խոհարարության ոլորտում. հրապարակումներ էլեկտրոնային սեղանադիր հրատարակչական համակարգերի օգնությամբ խոհարարության ոլորտում. թատերականացված ներկայացումներ խոհարարության ոլորտում:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայն էր կոլեգիայի քննարկման արդյունքների հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ «MASTERS OF PASTA» (IR1455136) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրել հետևյալ դասերի ապրանքների և ծառայությունների համար՝

դաս 30. մանանեխ. քացախ. սոուսներ. ամոքանք. համեմանք մակարոնեղենի համար. համեմունք մակարոնեղենի համար. պեստո (սոուս). տոմատի սոուս. սոյայի սոուս. զաֆրան (քրքում) (համեմանք) կոճապղպեղ (համեմանք մակարոնեղենի համար) (բոլոր վերը նշված ապրանքները, որպես համեմունքներ մակարոնեղենի համար). մակարոններ. ռավիոլի. սպագետի. վերմիշել,

դաս 35 գովազդ. բիզնեսի կառավարում. բիզնեսի կառավարում. գրասենյակային գործառույթներ. այլ անձանց ապրանքների և ծառայությունների լիցենզավորման առևտրային կառավարում. գովազդային նյութերի տարածում. ապրանքների ցուցադրում. ուղիղ փոստով գովազդ. շուկայավարում. առևտրային կամ գովազդային նպատակներով ցուցահանդեսների կազմակերպում. առևտրային տոնավաճառների կազմակերպում՝ առևտրային կամ գովազդային նպատակներով. ապրանքների

ներկայացում հաղորդակցման միջոցներով, մանրածախ նպատակներով. վաճառքի խթանում երրորդ անձանց համար. գովազդային տեքստերի հրատարակում. առցանց գովազդ համակարգչային ցանցում. հեռուստատեսային գովազդ. մանրածախ բիզնեսի ծառայություններ և առցանց մանրածախ բիզնես ծառայություններ, որոնք վերաբերում են հետևյալ ապրանքներին՝ մակարոններ, ռավիոլի, սպագետի, վերմիշել.

դաս 41. խոհարարության դասընթացների կազմակերպում. մրցույթների կազմակերպում խոհարարության ոլորտում. կոլոքվիումների կազմակերպում և անցկացում խոհարարության ոլորտում. սեմինարների կազմակերպում և անցկացում խոհարարության ոլորտում. գիտաժողովների (սիմպոզիումների) կազմակերպում և անցկացում խոհարարության ոլորտում. վարպետաց դասերի կազմակերպում և անցկացում (ուսուցում) խոհարարության ոլորտում. գրքերի հրատարակում խոհարարության ոլորտում. տեքստային նյութերի հրապարակում, բացառությամբ գովազդային նյութերի խոհարարության ոլորտում. գրքերի և պարբերականների առցանց հրապարակում խոհարարության ոլորտում. հրապարակումներ էլեկտրոնային սեղանադիր հրատարակչական համակարգերի օգնությամբ խոհարարության ոլորտում. թատերականացված ներկայացումներ խոհարարության ոլորտում,

դաս 43. սրճարանների ծառայություններ. նախաճաշարանների ծառայություններ. ճաշարանների ծառայություններ հիմնարկներում կամ ուսումնական հաստատություններում. ռեստորանների ծառայություններ. ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ. բարերի ծառայություններ. խորտկարանների ծառայություններ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ